

## Վարդաբլուր

Մակերես՝ 15.884կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 1303

Տնային տնտեսությունների թիվը՝ 440: Այս գյուղի պատմությունը սկսվում է 18-րդ դարի 60-ական թվականներից: Այն գտնվում է Լոռու մարզի Նախկին Ստեփանավանի տարածաշրջանում՝ մարզկենտրոնից 31 կմ հեռավորության վրա: Անվան ծագումը կապվում է վարդագգիների առատության հետ:

Գյուղի վարչական տարածքում պահպանվել են VI-րդ դարի Ջգրաշեն միանավ թաղածածկ եկեղեցին, որի սրբատաշ բազալտից կառուցված պատերը բարձրանում են երկաստիճան որմնախարսիսի վրա: Ծածկը չի պահպանվել: Եկեղեցին ունի երեք մուտք՝ երկայնական պատերում և արևմուտքում: Հարավային պատի արևելյան կողմի լուսամուտի պարակալին քանդակված են խաղողի որթի գալարների միջև եռաթերթ և բազմաթերթ տերևներ: Արտաքին պատերում պահպանվել են բազալտից պահուսակներ (սրահի ծածկը կրելու համար), որոնցից մի քանիսն ունեն կենդանակերպ քանդակներ (խոյի գլուխ, եղջերու, ոչխարի ոճավորված գլուխ): Պահուսակների այսպիսի քանդակագարդումը բացառիկ է վաղ միջնադարի Հայաստանի շինություններում: Ջգրաշենի հարդարանքը մեծ արժեք ունի V-VIIդդ. հայ ճարտարապետության զարդաքանդակների պատմության համար: Գյուղում և շրջակայքում պահպանվել են նաև XII-րդ դարի մատուռներ, X-XIդդ. ամրոց, XI-XVIIդդ. գերեզմանոց խաչքարերով: Գյուղի տարածքում է գտնվում 1860թ. կառուցված ⑥Սուրբ Աստվածածին⑦ եկեղեցին, որը համայնքի ուժերով նորոգվել է 2000թ.:

Ծովի մարերեւոյթից 1320մ բարձրության վրա է: Բնակչությունը 100%-ով ապահովված է խմելու ջրով, 65%-ով՝ բնական գազով:

Գյուղի կլիման ձմռանը մեղմ է, ամռանը՝ զով: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում են ցորենի և կարտոֆիլի արտադրությամբ, անասնապահությամբ: Ոռոգման ջրի ոչ բարվոք վիճակը թույլ չի տալիս ստանալ մշակաբույսերի բարձր բերք: Գյուղն ունի դպրոց, որը կառուցվել է 1996-97թ.թ., ուր սովորում են 165 աշակերտ:

Համայնքն ունի մշակույթի տուն, որը 2000թ. հիմնովին նորոգվել է, ունի կահավորված համերգային դահլիճ՝ 170 նստատեղով, խաղասենյակ: Գյուղապետարանի հովանավորությամբ գյուղում գործում է ժամանակակից պարերի խումբ, որի սաները մի շարք փառատոններում հաղթող են դարձել: Համայնքի հիմնախնդիրների մեջ կանոթվում են ջրամատակարարման ցանցի վերանորոգումը, մանկապարտեզի կահավորումը, ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգումը, ոռոգման ջրագծի կառուցում: